Կովկասի Ինստիտուտի Աշխատանքային զեկույցներ, Նոյեմբեր 2016

Ադրբեջանի քաղաքական համակարգը և դրա կախվածությունը էներգետիկ ռեսուրսներից

Արմեն Մանվելյան

© 2016 Կովկասի Ինստիտուտ, Երևան

Աշխատանքային զեկույց, նոյեմբեր 2016

www.c-i.am

Կովկասի Ինստիտուտի Աշխատանքային զեկույցներ:

Երևան, նոյեմբեր 2016

Հեղինակ՝ **Արմեն Մանվելյան**, պ.գ.թ., Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության հարցերով մասնագետ:

Գիտական խմբագիրը՝ **Սերգեյ Մինասյան**, ք.գ.դ., Կովկասի Ինստիտուտի փոխտնօրեն

Խմբագիրները և նկարների հեղինակները՝ **Հրանտ Միքայելյան**, **Լիանա Ավետիսյան**

Ադրբեջանի ֆինանսատնտեսական և քաղաքական համակարգը կախված է նավթի ու գազի շարունակական շահագործումից և դրանից ստացվող եկամուտներից, հետևաբար եկամուտների նվազումը՝ նավթի ցածր գների պայմաններում, կարող է կործանարար լինել նրա համար: Այդ բացասական ազդեցությունը նկատելի է նաև այսօր՝ եկամուտների շարունակական անկման, մանաթի արժեզրկման, արտահանման ծավալների, բյուջեի եկամուտների, ինչպես նաև հարկերի կրճատման, Կենտրոնական բանկի արժութային միջոցների սակավության համատեքստում: Այս զեկույցը նվիրված է Ադրբեջանի քաղաքական համակարգի և էներգետիկ ռեսուրսների փոխազդեցության վերլուծությանը:

Զեկույցը պատրաստվել է ASCN-ի աջակցությամբ:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ

Ադրբեջանը՝ որպես ռենտային պետություն 3

Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամ 8

Ադրբեջանի համախառն ներքին արդյունքի վերլուծությունը 11

Ադրբեջանի պետական բյուջեն, ֆինանսական հիմնախնդիրները և արտահանման ծավալների փոփոխությունները 17

Ամփոփում 22

Էներգակիրներով հարուստ պետությունները ժամանակի ընթացքում խորքային կախվածության մեջ են հայտնվում այդ ռեսուրսներից, ինչն ազդում է ոչ միայն այդ երկրների տնտեսական, այլև քաղաքական համակարգի վրա: Նմանատիպ պետություններում ավտորիտար ռեժիմը տարածված երևույթ է, իսկ, որպես կանոն, դրա հաստատման և երկարատև գոյության համար անհրաժեշտ նախապայմաններից են հիմնականում էներգակիրների արդյունահանման մեծ ծավալը և գների շարունակական աճը:

Համարվում է, որ այն պետությունները, որոնց ներքին համախառն արդյունքում (ՀՆԱ) նավթի ու գազի կամ այլ հումքի մասնաբաժինը ավելին է քան 35 տոկոս, ապա այդ պետություններում շատ դեպքերում առկա են ավտորիտար քաղաքական համակարգեր: Ներկայումս ՄԱԿ-ում գրանցված 193 պետություններից մոտ 35-ի ՀՆԱ-ի նավթագազային հատվածը կազմում է 35%-ից ավելին, և դրանցից միայն չորսն են համարվում ժողովրդավար՝ Հոլանդիան, Նորվեգիան, Կանադան և Մեծ Բրիտանիան:

Արևմտյան քաղաքագիտական շրջանակներում գիտական բանավեճ է ընթանում այս հարցի շուրջ, և շատերը պնդում են, որ այս կամ այն պետության համակարգի բնույթը կախված է ոչ միայն ու ոչ այնքան հումքային գործոնից, այլև համապատասխան ավանդույթներից, մշակույթից և պատմությունից: Ինչևէ, երբ հետևում ենք Ադրբեջանում գործող ռեժիմի ուժեղացման գործընթացին, ապա նկատելի է, որ այն լիովին համընկնում է նավթի արդյունահանման ծավալների և գների բարձրացման դինամիկայի հետ: Նավթի գների անկումը ազդում է նավթահանող պետության ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համակարգի վրա՝ հանգեցնելով դրանց թուլացմանը և նոր ռիսկեր ստեղծելով գործող քաղաքական ռեժիմի համար: Նավթահանող պետությունը, հայտնվելով նոր՝ նավթի ցածր գների իրականության մեջ, ստիպված է լինում վերանայել իր թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականությունը նավթից ստացվող ցածր եկամուտների պայմաններում գոյատևելու համար:

Ադրբեջանը՝ որպես ռենտային պետություն

Ադրբեջանը՝ որպես դասական ռենտային պետություն, խորքային կախվածություն ունի վերազգային նավթային ընկերություններից, որոնք վերահսկում են նավթ ու գազ արդյունահանող հիմնական ընկերությունները, որոնցից ամենախոշորներն են Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունը (ԱՄՕԸ) և Շահ-Դենիզ կոնսորցիումը: Այդ երկուսը միասին վերահսկում են Ադրբեջանի նավթի ու գազի պաշարների մոտ 75%-ը: Իրերի նման դասավորությունը օբյեկտիվորեն խորքային կախվածության մեջ է դնում պաշտոնական Բաքվին այդ նավթագազային կորպորացիաներից, սակայն միաժամանակ Ալիևյան կլանի համար անվտանգության որոշակի երաշխիքներ է տալիս, քանի որ վերջինիս քաղաքական ռեժիմը դառնում է վերահսկելի և կառավարելի:

ԱՄՕԸ հիմնվել է 1994 թվականին, սեպտեմբերի 20-ին՝ 30 տարի ժամկետով պայմանագիր կնքելով Ադրբեջանի կառավարության հետ (պայմանագիրը վավերացվել է խորհրդարանի կողմից 1994-ի դեկտեմբերի 2-ին, իսկ ընկերությունը սկսել է իր աշխատանքները 1995թ.-ի փետրվարից): Ընկերության հիմնադիրներն էին միջազգային 11 ընկերություններ՝ առաջին հերթին, բրիտանական British Petroleum-ը (BP)* և Ramco-ն, ամերիկյան Exxon, Unocal, Amoco, McDermott, Pennzoil, ապա ռուսական LUKoil-ը, նորվեգական Statoil-ը, թուրքական TPAO-ն և, վերջապես, Սաուդյան Արաբիան ներկայացնող Delta Nimir նավթային ընկերությունները: Իր մասնաբաժինը ունի նաև պետության շահերը ներկայացնող Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (SOCAR)՝ 11.6%: Ընկերությունը իր հիմնադրման առաջին իսկ տարիներին սկսել է շահագործել հեռանկարային համարվող Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթահանքերը: Այնտեղի նավթի պաշարները գնահատվում էին մոտավորապես 4 մլրդ բարել, ինչը այդ պահին կազմում էր Ադրբեջանի ապացուցված նավթի պաշարների մոտ 70%[1]:

ԱՄՕԸ բաժնետեր՝ վեց պետություններ ներկայացնող այս տասնմեկ ընկերությունների ցանկը մի քանի անգամ փոխվել է. դրանց մի մասը հեռացել է (օրինակ՝ ռուսական LUKoil-ը), իսկ ուրիշները (մասնավորապես նորվեգական Statoil-ը)՝ միացել: Սակայն, անփոփոխ է մնացել BP կողմից Ադրբեջանի թիվ մեկ նավթային ընկերության նկատմամբ վերահսկողությունը: BP-ն՝ որպես ամենախոշոր բաժնետեր (35.8%), հանդիսանում է ԱՄՕԸ-

*Այստեղ կարևոր է նշել, որ British Petroleum-ը ներկայումս պետք է դիտարկել ոչ միայն որպես բրիտանական ընկերություն. վերջինիս շահերը ակտիվորեն պաշտպանում են նաև ԱՄՆ-ը, որտեղ էլ պահվում են այդ նավթային ընկերության հիմնական ակտիվները:

[1]Woodward, “AIOC Contract,” *Azerbaijan International*, http://www.azer.com/aiweb/categories/magazine/62_folder/62_articles/62_socar_aioc.html

ն օպերատորը և ամբողջությամբ վերահսկում է նավթի ու գազի արդյունահանումը Ադրբեջանի ամենահեռանկարային համարվող նավթահանքերից[2]:

Նկար 1. Ադրբեջանում 1999թ.-ի դրությամբ հեռանկարային համարվող նավթահանքերը



** Նկարում պատկերված են 1999թ.-ի դրությամբ Ադրբեջանում հեռանկարային համարվող նավթահանքերը, որոնցից շատերը, սակայն, այդպես էլ իրականում հեռանկարային չդարձան:*

Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթահանքերում ԱՄՕԸ շահագործում է 6 նավթաշտարակ, դրանց սպասարկող կամունիկացիոն տարբեր համակարգեր՝ նասոսներ և այլն, ինչպես նաև խողովակաշարերի բարդ համակարգ, որը նավթը մղում է դեպի Բաքվի մոտ գտնվող Սանգաչայի նավթի տերմինալը: Վերջինս համարվում է աշխարհի ամենամեծ տերմինալներից մեկը՝ապահովված ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, և որը օրական կարող է ընդունել և վերամշակել մինչև 1.2 մլն բարել նավթ[3]:

2016թ.-ի դրությամբ Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթադաշտից ԱՄՕԸ-ը օրական արդյունահանում է միջինում մոտ 651 հազար բարել նավթ: Այստեղ կարևոր է նշել, որ 2014թ West Chirag կոչվող նավթաշտարակի շահագործումից հետո Ադրբեջանը կարողացավ

[2]"Azeri-Chirag-Deepwater Guneshli" *Bp.com*, http://bp.com/en_az/caspian/operationsprojects/ACG.html
[3]"Azeri-Chirag-Deepwater Guneshli" *Bp.com.*

կանխել նավթի արդյունահանման կտրուկ անկումը, որը սկսվել էր 2010թ.-ից հետո: 2016թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթադաշտի շահագործման նպատակով կատարվել է մինչև 32 մլրդ դոլարի ներդրում[4]:

Ինչ վերաբերում է Շահ-Դենիզ կոնսորցիումին՝ ադրբեջանական գազի արդյունահանման հիմնական ընկերությանը, այն ստեղծվել էր շահագործելու նույնանուն գազային հանքավայրը, որը հայտնաբերվել էր 1999թ.-ին՝ Բաքու քաղաքից մոտ 70 կմ հեռավորության վրա: Այնտեղ գազի ապացուցված պաշարները գնահատվում էին մոտ 1 տրիլիոն խորանարդ մետր, և այնտեղ է կենտրոնացված պետության գազի պաշարների մոտ 85%-ը: Հարավկովկասյան գազամուղով (Բաքու-Թբիլիսի-Էրզրում) այդ գազը մատակարարվում է Թուրքիային[5]:

Նորաստեղծ կոնսորցիումի ու Հարավկովկասյան գազամուղ ընկերության հիմնական բաժնետերը և օպերատորը BP ընկերությունն էր՝ 25.5% մասնաբաժնով: Նմանաչափ մասնաբաժին այս ծրագրերում ուներ նաև նորվեգական Statoil-ը: Սակայն, 2013-2014թթ. վաճառելով իրենց բաժնետոմսերը՝ Statoil-ը ֆրանսիական Total ընկերության հետ միասին հեռացավ ծրագրից: 2013թ.-ին Statoil-ը վաճառեց իր բաժնետոմսերի 10%-ը BP-ին և SOCAR-ին, իսկ հաջորդ տարի նրա մնացած 15.5%-ը գնեց Petronas-ը՝ մոտ 2.25 մլրդ դոլար գնով: Ֆրանսիական TOTAL-ը վաճառեց իր մասնաբաժինը՝ 10%-ը, թուրքական TPAO ընկերությանը՝ վերջնականապես հեռանալով ծրագրից[6]: Դեռևս 2004թ.-ին ծրագրից առաջինը հեռացավ իտալական Eni-ն: Այստեղ կարևոր է շեշտել, որ Statoil-ի և TOTAL-ի ընկերությունների հեռացումը Շահ-Դենիզ նախագծից հուշում է, որ այն՝ ըստ նրանց կարծիքի, հեռանկարային չէ: Այս պահին Շահ-Դենիզ կոնսորցիումի բաժնետոմսերը բաշխված են հետևյալ կերպ՝ 28.8%-ը պատկանում է BP-ին, 19%-ը՝ TPAO-ին, 16.7%-ը՝ SOCAR-ին, 15.5%-ը՝ Petronas-ին (Մալազիայի պետական նավթային ընկերությանը), 10%-ը՝ LUKoil-ին և մնացած 10%-ը՝ NIOC-ին:

Ադրբեջանից դուրս եկող երկու հիմնական խողովակաշարերը՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, ևս գտնվում են BP ընկերության վերահսկողության ու կառավարման ներքո:

Նկար 2. Բաքվից սկիզբ առնող գազատարը, նավթատարը և երկաթուղին:

---

[4]Woodward, "AIOC Contract."

[5]Ավելի մանրամասն տե՛ս՝ "Shah Deniz | Operations and Projects | BP Caspian," *Bp.com*, http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz.html.

[6]Gwladys Fouche and Solsvik, "Statoil Exits Shah Deniz Gas Project with Stake Sale to Petronas," *Reuters*, October 13, 2014, http://www.reuters.com/article/us-statoil-petronas-shahdeniz-idUSKCN0I209020141013.



Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը, որը պատկանում է BTC Co. Խողովակաշարային ընկերությանը, ի տարբերություն Ադրբեջանում գործող մյուս կոնսորցիումների, բրիտանական ընկերություն է և գրանցված է Մեծ Բրիտանիայում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ խողովակաշարը ի սկզբանե ստեղծվել էր՝ դառնալու տարածաշրջանի համար ռազմավարական նշանակության օբյեկտ, որի պատճառով էլ արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ այն շատ հաճախ հիշատակվում էր որպես “հիմնական խողովակաշար”[7]: Ըստ նախագծի հեղինակների՝ այդ խողովակաշարին պետք է միանային նաև Թուրքմենստանը և Ղազախստանը, որոնք նաև իրենց նավթի հսկայական մի մասը պիտի դրանով անցկացնեին: Նույնիսկ նախատեսվում էր կառուցել ծովի ընդերքով Ղազախստանը Ադրբեջանին միացնող խողովակաշար: Սակայն, իրականում Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը մինչ օրս ադրբեջանական նավթը առաքող հիմնական խողովակաշարն է, որը, այնուամենայնիվ, այդպես էլ ձեռք չբերեց տարածաշրջանային նշանակություն, չնայած Ադրբեջանում նավթի արդյունահանման ծավալների անկման շրջանում, այն նաև փոքր ծավալով ղազախական նավթ է առաքում:

2006թ.-ից մինչև 2016թ.-ի առաջին եռամսյակը Բաքու-Թբիլիսի-Ջեյհանով առաքվել է մոտ 2.43 մլրդ բարել նավթ (մոտ 324 միլիոն տոննա)[8]: 2016թ առաջին եռամսյակում

[7]Alexander Wöstmann, “Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company Founded — Alexander’s Gas and Oil Connections,” Gas and Oil Article, *Alexander’s Gas&Oil Connections. An Institute for Global Energy Research*, http://www.gasandoil.com/news/central_asia/06e64ce97241a092b52d5a35d6be6a60.

[8]“Baku-Tbilisi-Ceyhan Pipeline” *Bp.com*, http://bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/BTC.html.

արտահանվել է մոտ 67 միլիոն բարել հում նավթ (կամ 9 մլն տոննա), որով բեռնվել է 82 նավթատար: Նավթի արդյունահանման ծավալների անկումը, թեկուզ և փոքր ծավալով, սակայն պահպանվել է նաև 2016թ.-ի ընթացքում:

Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը շահագործում է Հարավկովկասյան գազամուղ կոչվող ընկերությունը, որի հիմնական բաժնետերն է BP-ին (28.8%): Այս ընկերության մասն են կազմում նաև ադրբեջանական SOCAR (10%), թուրքական TPAO (19%), մալազիական Petronas (15.5%), ռուսական Lukoil (10%), պարսկական NICO (10%) և ադրբեջանական SOCAR-ի կողմից կառավարվող SGM Midstream (6.7%) ընկերությունները[9]:

2016թ. առաջին եռամսյակում վերոհիշյալ գազամուղով, որի տրամագիծը 105սմ է, օրական արտամղվել է մոտ 21.6 մլն խ/մ գազ, ինչը տարեկան կտրվածքով կազմում է մոտ 7.8 մլրդ խ/մ գազ կամ արդյունահանվող գազի մոտ 40%: Նշենք, որ այս տարվա ընթացքում գազամուղի շահագործման համար կոնսորցիումը կծախսի մոտ 242 մլն դոլար[10]: 2015թ.-ի ընթացքում Ադրբեջանում արդյունահանվել է մոտ 18.2 մլրդ խ/մ գազ, որից 9.8 մլրդ խ/մ սպառվել է հենց բնակչության կողմից[11]: Մնացած 8.4 մլրդ խ/մ գազը արտահանվում է: Դրանից 7 մլրդ խ/մ BP-ի սեփականությունն է, որը Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով արտամղվում է դեպի Թուրքիա: Գազի 5%, կամ 350 մլն խ/մ BP-ին վճարում է Վրաստանին տարանցման համար; մոտ 500 մլն խ/մ էլ վաճառում է նրան ցածր գնով՝ երկկողմ պայմանավորվածությունների հիման վրա: Արտահանվող գազի մնացած 1.4 մլրդ գազը SOCAR-ի սեփականությունն է, որից 200 մլն խ/մ սվոփ-գործարքի հիման վրա արտամղվում է Իրան, որն էլ համապատասխան քանակի գազ է առաքում Նախիջևան: 1.2 մլրդ խ/մ գազ SOCAR-ը Ղազախ կոչվող գազամուղով արտահանում է դեպի Վրաստան: Գազը Ադրբեջանում, առհասարակ, սպառում են շարքային քաղաքացիները, ջերմակայանները և արդյունաբերական ընկերությունները: Դրա մի մասն էլ Ադրբեջանը ստիպված է ծախսել նավթի արդյունահանման նպատակով:

Գազի արդյունահանման ծավալները Ադրբեջանում, ի տարբերություն նավթի, ամեն տարի աճում են մոտ 3-4%-ով, սակայն մինչև Շահ-դենիզ-2 ծրագրի իրականացումը և գազի արդյունահանման ծավալների կտրուկ աճը, Բաքուն խնդիրներ կունենա գազի արդյունահանման հարցում: Հետևաբար վերջինս ստիպված է բանակցել Գազպրոմի հետ տարեկան մոտ 1 մլրդ խ/մ գազ գնելու շուրջ[12]:

---

[9]"South Caucasus Pipeline" *Bp.com*, http://bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/SCP.html.
[10]Տե՛ս նշված աղբյուրը:
[11]BP stats, "BP Statistical Review of World Energy June 2016," n.d.
[12]BP stats, "BP Statistical Review of World Energy June 2016."

Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամ

Ադրբեջանի տնտեսական ու քաղաքական համակարգի ֆինանսական հենասյուններից է Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամը (ԱՊՆՀ): Այն հիմնադրվել է դեռ 1999թ.-ի դեկտեմբերի 29-ին՝ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հրամանով: Նախատեսվում էր, որ Հիմնադրամի գործունեությունը ուղղված է լինելու պետության տնտեսության զարգացմանը և կայունության ապահովմանը նավթի ու գազի վաճառքից ստացված եկամուտները հեռանկարային համարվող ծրագրերի ֆինանսավորման միջոցով: Սկզբում Հիմնադրամի հաշվին կար ընդամենը 271 միլիոն դոլար, իսկ 2016թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ նրա միջոցները կազմում են արդեն մոտ 34.25 միլիարդ դոլար[13]:

Հիմնադրամի կանոնադրության համաձայն՝ դրա ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել միայն ռազմավարական նշանակության ծրագրերի ու նախագծերի ֆինանսավորման նպատակով: Հիմնադրամը՝ տնտեսական ու ֆինանսական ճգնաժամերի պայմաններում հնարավոր կորուստները նվազեցնելու համար իր հիմնական ակտիվները ներդնում է արտասահմանյան տարբեր հիմնադրամներում, արժեթղթերում, անշարժ գույքում և այլն: Ներկայումս հիմնադրամի միջոցների 4.6% ներդրված է անշարժ գույքի մեջ (Մոսկվա, Լոնդոն, Փարիզ և Նյու Յորք), 3.1%՝ ոսկու (30175 կգ), 7.7%՝ տարբեր արժեթղթերի, 2.5%-ի հաշվին իրականացվում են տարբեր ծրագրեր, իսկ 80.6% ներդրված են տարբեր պարտաթղթերի և ֆինանսական շուկայի գործիքների մեջ[14]:

Հիմնադրամի եկամուտները կախված են նավթից ու գազի վաճառքից ստացվող եկամուտներից, իսկ, քանի որ դրանք նվազում են, կրճատվում են նաև հիմնադրամի միջոցները: Այսպես, եթե 2015թ. հիմնադամի եկամուտը կազմել է 7.3 միլարդ դոլար, մոտ 8.8 մլրդ դոլարով ավելի պակաս քան 2014թ.: Հիմնադրամը այդ տարի՝ 2015թ. իր միջոցներից պետական բյուջ է փոխանցել 8.7 մլրդ դոլար գումարը, ինչը նշանակում է ընդհանուր դիֆիցիտը կազմել է մոտ 1.4 մլրդ. դոլար գումար[15]:

Ընդհանրապես պետք է շեշտել, որ արդեն երկար ժամանակ է ինչ Ադրբեջանի պետական բյուջեն խորքային կախվածություն ունի Հիմնադրամի գործունեությունից և նրա

---

[13]Цурков М. “SOFAZ избрал аудитора на ближайшие три года”, *Trend.Az*, July 12, 2016, http://www.trend.az/business/economy/2556354.html.

[14]Jon Western and Joshua S. Goldstein, “Humanitarian Intervention Comes of Age,” *Foreign Affairs* 90, no. 6 (2011): 48–59.

[15]“SOFAZ Reserves in 2015 Reduced by $ 3.6 Billion,” March 2, 2016, http://www.contact.az/docs/2016/Economics&Finance/030100148510en.htm#.V97vj_l97IU.

ֆինանսական միջոցներից, և ամեն տարի ավելանում է Հիմնադրամից բյուջե ուղղված ֆինանսական միջոցների փոխանցումները, որոնց հաշվին էլ, փաստորեն, գոյատևում է պետական մեքենան:

Նկար 3. ԱՊՆՀ-ի՝ Ադրբեջանի պետական բյուջե դրամական փոխանցումների ծավալները, 2006-2013:



** Աղբյուրը՝ Ասիական զարգացման բանկի զեկույցը 2014-2018[16]:*

Ինչպես պատկերված է Նկար 3-ում, պետական բյուջե ուղղվող ֆինանսական ներդրումների տոկոսը տարեց տարի միայն ավելացել է, ինչը հանգեցրել է պետության խորքային կախվածությանը նավթային եկամուտներից և ԱՊՆՀ-ից: 2013թ. արդյունքներով Ադրբեջանի պետական բյուջեի մոտ 60% իրականացվել է միայն շնորհիվ ԱՊՆՀ-ի իրականացված փոխանցումների: Հաջորդ նկարը (4) ցույց է տալիս Ադրբեջանի պետական բյուջեի իրական պատկերը ինչպես առանց Հիմնադրամի կատարված ներարկումների, այնպես էլ դրանք ներառյալ:

[16]"Economic Development in Azerbaijan," n.d.

Նկար 4. Ադրբեջանի պետական բյուջեի հաշվեկշիռը՝ հաշվարկված ԱՊՆՀ-ի դրամական փոխանցումները ներառյալ և առանց դրանց, 2006-2013



** Հաշվարկված է ԱՊՆՀ-ի և Ադրբեջանի պետական բյուջեի խմբավորված տվյալների հիման վրա[17]:*

Կարևոր է նշել, որ Հիմնադրամը, կարելի է ասել, արդեն վաղուց շեղվել է իր իսկ որդեգրած քաղաքականությունից և ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման փոխարեն գումարներ է փոխանցում պետական բյուջե, ինչը հակասում է նրա իսկ կանոնադրությանը: Սակայն, այն զուգահեռաբար ֆինանսավորել է և շարունակում է աջակցել մի շարք ռազմավարական ծրագրերին, որոնցից կարելի է նշել հատկապես Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Ներկայումս Հիմնադրամը ֆինանսավորում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի նախագիծը, նաև նավթավերամշակման գործարանի կառուցումը Թուրքիայում, TANAP ծրագրի ադրբեջանական մասնաբաժինը, ինչպես նաև նավթաշտարակների կառուցումը Կասպից ծովում և այլն:

[17] "Economic Development in Azerbaijan," n.d.

Ադրբեջանի համախառն ներքին արդյունքի վերլուծությունը

Ադրբեջանի խորքային կախվածությունը նավթի ու գազի համակարգից պարզ երևում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վերլուծությունից: Նավթի ու գազի համակարգը երկար տարիներ եղել է ու մինչ այսօր էլ մնում է այդ պետության տնտեսության հիմնական շարժիչ ուժը. այս ոլորտը կազմում է Ադրբեջանի ՀՆԱ-ի մոտ 50%-ը (Նկար 5):

Վերջին տարիներին Ադրբեջանը ակտիվ քաղաքականություն էր վարում, այսպես կոչ-ված, ոչ նավթային հատվածի զարգացման ուղղությամբ, ինչը հիմնականում արտահայտվում էր շինարարության և ծառայությունների բնագավառում կատարվող ներդրումներով: Դրա արդյունքում այդ ոլորտները արագ տեմպերով զարգացան, ինչն, իր հերթին, առիթ է տվել Ադրբեջանի իշխանությունների հայտարարելու, որ պետության տնտեսական զարգացումը այլևս կախված չէ նավթագազային համակարգից ու այնտեղ ուղղվող ներդրումներից:

Նկար 5. Ադրբեջանի ՀՆԱ-ի կառուցվածքը, 2012-2013թթ.



* *Աղբյուրը՝ Trend.az*[18]*:*

Ինպես երևում է վերը ներկայացված պատկերից, միայն 2012-2013թթ. ընթացքում նավթագազային հատվածի մասնաբաժինը Ադրբեջանի ՀՆԱ-ում 52.7%-ից նվազել էր մինչև 48.7%: Պատճառը շինարարության բնագավառում նավթային ներդրումների ավելացումն էր. այդ նույն ժամանակահատվածում շինարարության մասնաբաժինը 4.9%-ից ավելացել էր մինչև 7.8%: Նմանատիպ աճը նկատելի է նաև մյուս բնագավառներում, հատկապես ծառայությունների. վերջին տարիներին դրանց մասնաբաժինը երբեք չի նվազել:

18 ЭКОНОМИКА АЗЕРБАЙДЖАНА ВЫРОСЛА НА 3,1%», *Trend.Az*, http://www.trend.az/infographics_page.php?id=37.

Ինչպես նշեցինք, նմանատիպ աճը հնարավոր է եղել գրանցել միմիայն նավթադոլարային գերեկամուտների շնորհիվ, երբ նավթի գները բարձր էին և Ադրբեջանը հնարավորություն ուներ այդ եկամուտները ուղղել, այսպես կոչված, ոչ նավթային հատված: Բայց դեռ 2012թ. Համաշխարհային Բանկի փորձագետները նշում էին, որ նավթի եկամուտների կրճատմանը Ադրբեջանում զուգահեռ կպակասեն նաև ոչ նավթային համակարգ ուղղվող ներդրումները, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի այդ հատվածի աճի նվազմանը և ապա կրճատմանը[19]: Այս կանխատեսումները, կարելի է ասել, իրականություն դարձան արդեն 2014-2015թթ., երբ սկսեցին նվազել նավթի գները, ինչն էլ հանգեցրեց Ադրբեջանի ՀՆԱ-ի էական փոփոխությանը: Նավթի գների կտրուկ կրճատումը, ինչպես և սպասվում էր, Ադրբեջանի ՀՆԱ-ի զգալի նվազման պատճառ դարձավ, որի մասին փաստում է 2014թ.-ի և 2015թ.-ի տնտեսական տվյալների միջև առկա տարբերությունը:

Նկար 6. Ադրբեջանի ՀՆԱ-ն 2001-2015 թթ.-ին և դրա վերաբերյալ կանխատեսումները 2016-2018թթ.-ին:



** Աղբյուրները՝ IMF[20]; Trading Economics[21]:*

2006թ.-ին սկսված ՀՆԱ-ի աննախադեպ աճը 2015թ.-ին անկում ապրեց մոտ 30%-ով (Տես Նկար 6)՝ 75.3 մլրդ դոլարից նվազելով մինչև 54 մլրդ դոլար և այդպիսով հավասարվելով

[19]CIA World Factbook, "Economy Overview," https://www.cia.gov/library/publications/the-world-bank/geos/aj.html.
[20]International Monetary Fund, "World Economic Outlook Database," accessed September 18, 2016, http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/weodata/index.aspx.
[21]"Azerbaijan GDP," *Trading Economics*, 2016, http://www.tradingeconomics.com/azerbaijan/gdp.

2010թ.-ի ցուցանիշին: Դա պայմանավորված էր ոչ միայն նավթի գների անկմամբ, այլև տեղական արժույթի՝ մանաթի արժեզրկմամբ, որը 2014-2015թթ. ընթացքում կազմել է մոտ 100%:

Նշենք, որ Ադրբեջանի ՀՆԱ-ի ավելացումը պայմանավորված էր միմիայն նավթի արդյունահանման ծավալների և նավթի միջազգային գների աննախադեպ աճով: 1995թ.-ին այն կազմում էր ընդամենը 3.05 մլրդ դոլար, իսկ 2015թ.-ին հասավ իր մաքսիմումին՝ մոտ 75.2 մլդ դոլարի: Նման աճը պայմանավորված էր միջազգային շուկայում նավթի պահանջարկի շարունակական աճով, ինչն էլ, իր հերթին, հանգեցրեց նավթի գների բարձրացմանը:

Հիշեցնեմ, որ 2000թ.-ին նավթի գինը համաշխարհային շուկաներում կազմում էր ընդամենը 22 դոլար, սակայն դրա շարունակական բարձրացման պայմաններում 2006թ. այն եռապատկվեց՝ հասնելով մոտ 60 դոլարի, իսկ հետագայում այդ աճն էլ ավելի արագացավ՝ 2008թ. հասնելով աննախադեպ բարձր գնի՝ մոտ 146 դոլար մեկ բարելի դիմաց (Նկար 7):

Նկար 7. Brent տեսակի հում նավթի համաշխարհային գինը (ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց), 2000-2016թթ.:



* *Աղբյուր՝ EUROPP*[22]*:*

[22]Bert Scholtens, "Falling Oil Prices Should Help Europe's Ailing Economies, but the Wider Implications of the Price Drop Remain to Be Seen," *EUROPP*, January 21, 2015, http://blogs.lse.ac.uk/europpblog/2015/01/21/falling-oil-prices-should-help-europes-ailing-economies-but-the-wider-implications-of-the-price-drop-remain-to-be-seen/.

2008թ. ֆինանսական համաշխարհային ճգնաժամի հետևանքով նավթի գները նվազեցին և 2009թ.-ին հասան 40 դոլարի: Սակայն արդեն հաջորդ տարիներին նրանք սկսեցին բարձրանալ՝ 2011-2014թթ.-ին տատանվելով մոտ մեկ բարելի դիմաց 100 դոլարի սահմաններում:

Այսպիսով, նավթի բարձր գները գերեկամուտներ էին ապահովում Ադրբեջանին, ինչն աննախադեպ էր վերջինիս համար: Ինչպես երևում է հաջորդ պատկերից, նավթի գների շարունակական աճը և նավթի արդյունահանման ավելացումը նպաստում էր նաև Ադրբեջանի եկամուտների ավելացմանը: Այսպես, 100 դոլար մեկ բարելի դիմաց գնի դեպքում (խոսքը Brent տեսակի հում նավթի մասին է, որը վաճառվում է Լոնդոնի բորսայում), այդ պետության մաքուր եկամուտը կազմում է 15 մլրդ դոլար: Բնականաբար, որ ավելացման և նվազման դեպքում պակասում են նաև եկամուտները:

Նկար 8. Ադրբեջանի պետական բյուջեի՝ նավթի և գազի արտահանումից ստացված եկամուտները՝ ըստ Brent տեսակի հում նավթի գնի տատանումների:



** Աղբյուրները՝ Thomson Reuters; SOFAZ; The Economist[23]:*

Նավթի գնի ամեն մի տատանումը մոտ 10 դոլարի սահմաններում Ադրբեջանի նավթային եկամուտները ավելացնում կամ նվազեցնում է լրացուցիչ 1.33 մլրդ դոլարի չափով: Հետևաբար դժվար չէ հաշվարկել, որ նավթի գնի անկումը 2014թ.-ի մոտ 100 դոլարից մինչև 2015թ.-ի 40

[23]"Baku to the Future," *The Economist*, http://www.economist.com/news/europe/21699164-post-soviet-autocracy-tries-transmute-black-gold-modernity-baku-future.

դոլարը տարեկան կտրվածքով պետությանը մոտ 10.4 մլրդ դոլարի չափով վնաս հասցրեց: Նավթի վաճառքից սպասվելիք եկամուտների այսպիսի հսկայական անկումը պատճառ հանդիսացավ այդ պետությունում տնտեսական ու դրան հետևած քաղաքական ճգնաժամի խորացմանը:

Սակայն Ադրբեջանի խնդիրներն ավելի խորքային են՝ պայմանավորված ոչ միայն նավթի գների, այլև արդյունահանման շարունակական նվազմամբ: Ինչպես երևում է հաջորդ նկարից, 2000թ.-ին Ադրբեջանի նավթի արդյունահանման հզորությունը կազմում էր հազիվ 280 000 հազար բարել օրական կամ մոտ 12.5 մլն տոննա տարեկան: Նավթի արդյունահանման ծավալները Ադրբեջանում աննախադեպ մեծ էին 2005, 2006 և 2007 թվականներին, երբ գրանցվեց համապատասխանաբար 39.23, 47.81 և 31.56 տոկոս տարեկան աճ: 2011թ.-ին գրանցվեց նավթի արդյունահանման անկման առաջին դեպքը՝ մոտ մինուս 5.2 %, 2012թ.-ին՝ մինուս 6.21%, 2013թ.-ին՝ մինուս 5.53%, իսկ 2014թ.ին՝ մինուս 2.78%[24]:

Արդյունահանման փոքր ծավալները պահպանվեցին մինչև 2004թ.-ը, որից հետո, շնորհիվ Ազերի-Չիրաք-Գյունեշլի նավթադաշտում հորատված աշտարակների աշխատանքի, գրանցվեց աննախադեպ աճ՝ 2010թ.-ին արդյունահանման ծավալները հասցնելով 1 մլն բարելի օրական, կամ մոտ 50 մլն տոննա տարեկան: Այնուամենայնիվ, նավթի արդյունահանման նման տեմպերը երկար ժամանակ պահպանել չհաջողվեց, և արդեն 2011թ.-ին գրանցվեց նվազման առաջին դեպքը, որը հետագայում ևս կրկնվեց: 2015թ.-ին Ադրբեջանին հաջողվել է պահպանել նավթի արդյունահանման նախկին ծավալները, սակայն 2016թ.-ի առաջին վեց ամսվա տվյալները վկայում են, որ դրանք շարունակում են նվազել:

Նկար 9. Ադրբեջանի նավթի արդյունահանման ծավալները, 2000-2015թթ.:



[24]"Azerbaijan Crude Oil Production Annual Growth Rate," *Index Mundi*, http://www.indexmundi.com/energy/?country=az&product=oil&graph=production-growth-rate.

** Աղբյուրը՝ Journal of Glaciology*[25]*:*

Նավթի արդյունահանման անկումը 2011-2015թթ.-ին ընթացքում կազմեց մոտ 20%՝ մինչև օրական 800 հազար բարել: Դրան հետ զուգահեռ նվազել է նաև ՀՆԱ-ն. 2016թ.-ի հունվար-մայիս ամիսներին ՀՆԱ-ն կազմել է 21.5 մլրդ մանաթ գումար՝ 4.2% պակաս 2015թ.-ի համապատասխան ցուցանիշից*: Տնտեսական անկման պատճառը, ինչպես և նշել ենք, այսպես կոչված, ոչ նավթային հատվածն էր, որտեղ կտրուկ կերպով նվազեցին ներդրումները նավթի վաճառքից ստացվող եկամուտների կրճատման պայմաններում: Անկումը հիմնականում գրանցվել է շինարարությունների և տրանսպորտի հատվածում՝ համապատասխանաբար 37 և 9.5 տոկոսների չափով: 2016թ.-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում ՀՆԱ-ի ոչ նավթային հատվածի անկումը կազմել է 7%՝ 2015թ.-ի հետ համեմատ, իսկ ոչ նավթային հատվածի մասնաբաժինը վերջին 15 տարիների ընթացքում առաջին անգամ կազմել է 62%: Նավթագազային հատվածի մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում նվազել է՝ հասնելով ընդամենը 35.8%, չնայած այս բնագավառում այս տարի գրանցվել է մի փոքր աճ[26]:

---

[25]Ron Patterson, “US Oil Production Finally Starting to Decline,” *Journal of Glaciology*, September 1, 2015, http://openurl.ingenta.com/content/xref?genre=article&issn=0022-1430&volume=61&issue=228&spage=745.

* ՀՆԱ-ի այս անկումը դոլարային էկվիվալենտով ավելի մեծ է:

[26]Хасанли А. “Сфера производства обеспечила половину ВВП Азербайджана”, *16 июня 2016* http://www.trend.az/business/economy/2546418.html.

Ադրբեջանի պետական բյուջեն, ֆինանսական հիմնախնդիրները և արտահանման ծավալների փոփոխությունները

Ըստ հաշվարկների՝ 2003-2015թթ.-ին նավթի ու գազի վաճառքից ստացվող Անդրբեջանի ընդհանուր եկամուտը կազմել է 119 միլարդ դոլար[27]: Այս գումարի հիմնական մասը ծախսվել է ենթակառուցվածքների կառուցման ու վերականգման, մի մասը՝ զենքի գնման և մի հսկայական հատված էլ՝ սպորտային* ու մշակութային միջոցառումների վրա: Պարզ է, որ այս գումարի մի հսկայական մասն էլ փոխանցվել է տարբեր օֆշորային գոտիներում գրանցված պետական բարձրաստիճան չինովնիկների ու, առաջին հերթին, Ալիևների կլանի ներկայացուցիչների անձնական հաշիվներին[28]:

Դեռ այն ժամանակ, երբ նավթի բարձր գներից ստացվող գերեկամուտները զուգակցվում էին Ադրբեջանում նավթի արդյունահանման աննախադեպ աճով՝ պայմանավորված Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթահորերի աշխատանքով, մասնագետները պնդում էին, որ նավթի արդյունահանման նման տեմպերը երկար տևել չեն կարող, որ գերեկամուտներ հետապնդելու մոլուցքով տարված պաշտոնական Բաքուն վնասում է նավթի արդյունահանման կայուն աճին և որ նվազումը կսկսվի շատ ավելի շուտ, քան կանխատեսում են Ադրբեջանի պետական կառույցները:

Ադրբեջանի պետական բյուջեն ձևավորվում է հիմնականում երեք աղբյուրներից ստացվող վճարումներից: Այսպես, 2016թ.-ի պետական բյուջեի ամենախոշոր ներմուծողը, ինչպես միշտ, ԱՊՆՀ-ն է, որը վճարում է բյուջեի 45%: Երկրորդը հարկային համակարգն է՝ 41%, իսկ երրորդը՝ մաքսային կոմիտեն՝ 11% (Նկար 10): Ընդհանուր առմամբ, բյուջեում եկամուտների բաժինը կազմել է 10.7 մլրդ դոլար (16.8 մլրդ մանաթ), իսկ ծախսերինը՝ 11.8 մլրդ դոլար (15.5 մլրդ մանաթ); իսկ ընդհանուր դեֆիցիտը (պակասուրդը) գնահատվել է 1.07 մլրդ դոլար (1.6 մլրդ մանաթ)[29]:

---

[27]"Baku to the Future," *The Economist*, http://www.economist.com/news/europe/21699164-post-soviet-autocracy-tries-transmute-black-gold-modernity-baku-future.

* Օրինակ՝ Համաեվրոպական առաջին խաղերի իրականացման համար Ադրբեջանը ծախսել է մոտ 8 միլիարդ դոլար գումար:

[28]"The Global Intelligence Files - Wiki - Who Owns What in Azerbaijan," *WikiLeaks*, February 20, 2013, https://wikileaks.org/gifiles/docs/15/1514568_wiki-who-owns-what-in-azerbaijan-.html.

[29]Karimova, "Azerbaijani Parliament Adopts Revised Budget for 2016," *AzerNews.az*, February 23, 2016, http://www.azernews.az/nation/93260.html.

Նկար 10. Ադրբեջանի պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2016թ.:



** Աղբյուրը՝ Oval[30]:*

Ադրբեջանի բյուջեի ֆինանսավորման աղբյուրների ցանկը ևս մեկ անգամ հաստատում է պետական համակարգի խորքային կախվածությունը նավթագազային հատվածից, քանի որ, բացի ԱՊՆՀ-ի, երկրորդ խոշոր ներմուծող համարվող հարկային համակարգը իր հարկերի առյուծի բաժինը հավաքում է հենց նավթ ու գազ արդյունահանող ընկերություններից: Ադրբեջանի ամենախոշոր հարկատուներն են Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունը, Ադրբեջանի նավթային պետական ընկերությունը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերը շահագործող կոնսորցիումները և գազ արդյունահանող Շահ-Դենիզ ընկերությունը:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի արտահանմանը, ապա այստեղ ամենամեծ մասնաբաժինը զբաղեցնում են նավթը և գազը: Օրինակ, 2014թ.-ին արտահանումը կազմել է 25. 7 մլրդ դոլար, որից 87% հում նավթն է, 4.5%՝ նավթամթերքը, իսկ գազի արտահանումը կազմել է 1.5%[31]: Սա նշանակում է, որ Ադրբեջանի արտահանման 93% կազմում է նավթագազային համակարգը: Մնացած 7%, այսպես կոչված, ոչ նավթային ապրանքներին է բաժին ընկնում: Հետևաբար, նավթի արդյունահանման ծավալների շարունակական անկումը և նավթի միջազգային ցածր գները նվազեցնում են արտահանման ընդհանուր ծավալները:

[30]"The Impact of Declining Oil Prices on the State Budget of The Republic of Azerbaijan Public Finance and Budgeting," *Oval*, January 27, 2016, http://oval.az/the-impact-of-declining-oil-prices-on-the-state-budget-of-the-republic-of-azerbaijan-public-finance-and-budgeting/.

[31]"OEC - Azerbaijan (AZE) Exports, Imports, and Trade Partners," *OEC*, http://atlas.media.mit.edu/en/profile/country/aze/.

Նկար 11. Ադրբեջանի նավթի արդյունահանման ծավալները և Brent տեսակի հում նավթի գները, օգոստոս 2014-հուլիս 2015:



** Աղբյուրները՝ ISET Policy Institute, Meydan TV[32]:*

Ադրբեջանի արտահանումը և նրա եկամուտները կախված են ոչ միայն նավթի արդյունահանման ծավալից, այլև նրա գնից և ազգային արժույթի՝ մանաթի փոխարժեքից դոլարի դիմաց: Ինչպես երևում է Նկար 8-ից, բորսաներում նավթի գնի անկմանը համաչափ նվազում էին նաև Ադրբեջանի եկամուտները: Եթե 2014թ.-ի օգոստոս ամսվա գներով՝ մոտ 100 դոլար մեկ բարելի դիմաց, այդ արտահանման ծավալը կազմել է մոտ 23 մլրդ դոլար, ապա մեկ տարի անց՝ 2015թ.-ի հուլիսին մոտ 50 դոլար գնի պայմաններում այն կազմել է ընդամենը14 մլրդ դոլար:

Նշենք, սակայն, որ Ադրբեջանի արտահանումից ստացվող եկամուտները տեղական արժույթով ավելի ցածր կլինեին, եթե նա ստիպված չլիներ կատարել մանաթի դեվալվացիա՝ 2015թ. փետրվարին մոտ 33%-ի չափով, իսկ դեկտեմբերին ևս 32%-ով: 2014-2015թթ.-ի ընթացքում ադրբեջանական մանաթի ընդհանուր արժեզրկումը կազմեց մոտ 98.72%: Տեղական արժույթի արժեզրկման նպատակն էր դոլարային եկամուտների կտրուկ նվազման պայմաններում պահպանել նախկին եկամուտների չափը տեղական արժույթով, ինչը՝ ըստ

[32]ISET Policy Institute, “Azerbaijan Economy and the Oil Prices: A Blessing in Disguise?,” *Meydan TV*, http://www.meydan.tv/+7nenh.

ադրբեջանցի մասնագետների՝ կնվազեցներ ընդհանուր կորուստները, գոնե մանաթով, և կմեղմացներ ֆինանսական այն ճգնաժամը, որը սպառնում էր երկրին, հատկապես պետական համակարգում աշխատավարձերի ու թոշակների վճարման առումով:

Ինչպես երևում է Նկար 12-ից, նավթի գների անկումը հատկապես ուժեղ է հարվածել ԱՊՀ այն պետությունների ֆինանսական համակարգերին, որոնց տնտեսությունների զարգացումը կախված է նավթային համակարգից և նավթի միջազգային գներից: Առավել ծանր է այդ անկումը անդրադարձել ադրբեջանական մանաթի վրա, ինչի արդյունքում վերջինիս արժեզրկումը 2014-2015թթ.-ին կազմել է մոտ 98.7%: Իսկ մինչ այդ ադրբեջանական մանաթը համարվում էր տարածաշրջանի ամենակայուն արժույթը: Նավթի գների անկումը ապացուցեց, որ իրականում այդ կայունությունը թվացյալ էր և պահպանվում էր ֆինանսատնտեսական համակարգ նավթադոլարների շարունակական մուտքի շնորհիվ:

Մանաթի փոխարժեքը կայուն պահելու համար Ադրբեջանի Կենտրոնական բանկը 2015թ.-ի ընթացքում ծախսել է մոտ 7 մլրդ դոլար գումար: Արդյունքում ԿԲ-ի ռեզերվները մեկ տարվա ընթացքում 13.8 մլրդ դոլարից նվազեցին մինչև 6.8 մլրդ դոլար[33]: Այս քաղաքականությունը շարունակելու դեպքում պետությունը կհայտնվեր սննկացման եզրին: Այդ իսկ պատճառով ԿԲ-ն ստիպված էր փոխել այն:

Նկար 12. Ազգային արժույթի արժեզրկումը ԱՊՀ տարածքում, 2014-2015թթ. (%)



* *Աղբյուրը՝ SLON.ru*[34]*:*

[33]"Azerbaijani Manat Collapses after Government Abandons Dollar Peg," *Financial Times*, 2016, https://www.ft.com/content/b5f46eac-a7c4-11e5-9700-2b669a5aeb83.

[34]Карасюк Е. "Долларов не было, покупали рубли", - девальвация валюты в странах СНГ", *SLON*, https://slon.ru/posts/61581.

Ադրբեջանը, իր ռեսուրսների հիմնական մասը ծախսելով մանաթի կայունացման վրա, հետագայում ստիպված էր մանաթի փոխարժեքը բաց թողնել, քանի որ Կենտրոնական Բանկի նման քաղաքականությունը վերջնականապես կսպառեր պահուստային՝ դոլարային ռեսուրս-ները: Հետագայում Ադրբեջանի Կենտրոնական բանկը հայտարարեց, որ պատրաստվում է փոխել իր քաղաքականությունը, իսկ մանաթի փոխարժեքն էլ այլևս կապված չի լինելու դոլարին:

Գործնականում, մինչ օրս էլ ադրբեջանական մանաթը կապված է դոլարին, իսկ Ադրբեջանի Կենտրոնական բանկն էլ ստիպված է միջոցներ ծախսել այդ փոխարժեքը գոնե որոշ չափով կայուն պահելու համար, սակայն, ինչպես և 2015թ.-ին, այն վաղ թե ուշ ստիպված է լինելու բաց թողնել նրան, և մենք ականատես կլինենք ադրբեջանական արժույթի հերթական արժեզրկմանը:

Ամփոփում

Ադրբեջանի ֆինանսատնտեսական և քաղաքական համակարգը կախված է նավթի ու գազի շարունակական շահագործումից և դրանից ստացվող եկամուտներից: Այդ եկամուտների նվազումը՝ հատկապես նավթի ցածր գների երկարատև պահպանման դեպքում, կարող է ճգնաժամային լինել Ադրբեջանի տնտեսական և քաղաքական համակարգի համար: Այդ բացասական ազդեցությունը նկատելի է նաև այսօր՝ եկամուտների շարունակական անկման, մանաթի արժեզրկման, արտահանման ծավալների, բյուջեի եկամուտների, հարկերի ներմուծման, Կենտրոնական բանկի արժույթային միջոցների կրճատման համատեքստում:

Նման ճգնաժամային իրավիճակի համար Ադրբեջանն ունի այսպես կոչված փրկության «բարձիկ»՝ հանձինս ԱՊՆՀ-ի, որտեղ, ինչպես նշել ենք, կենտրոնացված է մոտ 35 մլրդ դոլար գումար: Սակայն արդեն 2015թ այդ հիմնադրամի դեֆիցիտը կազմեց մոտ 1.4 մլրդ դոլար: 2016թ.-ին այն ավելի մեծ կլինի՝ պայմանավորված ընդամենը 6 մլրդ դոլար սպասվող եկամուտով: Այնուամենայնիվ, Հիմնադրամն է, որ հնարավորություն կտա Ադրբեջանի տնտեսությանը գոյատևել ևս մի քանի տարի, եթե նավթի գները շարունակեն մնալ 40-50 դոլարի սահմանում: Այս Հիմնադրամում կուտակված միջոցների հաշվին է իր իշխանությունը պահպանում նաև Ալիևների կլանը:

Սակայն հիմնադրամի եկամուտները կսկսեն նվազել, եթե նավթի գները չբարձրանան մոտակա տարիների ընթացքում: Ադրբեջանի տնտեսության ու քաղաքական համակարգի գոյատևման համար հարկավոր է, որ նավթի գները լինեն առնվազը 80 դոլար մեկ բարելի դիմաց:

Դրա հետ մեկտեղ, Ադրբեջանը ներգրավված է մի շարք նախագծերում, որոնց իրականացման համար անրաժեշտ են հսկայական ներդրումներ, հետևաբար՝ ԱՊՆՀ-ի աջակցությունը: Դրանցից ամենախոշորը թերևս TANAP ծրագիրն է, որի հիմնական բաժնետեր-օպերատորն է SOCAR ընկերությունը (բաժնետոմսերի 58%): Այս ծրագիրը Իլհամ Ալիևի ամենահավակնոտ նախագիծն է, որն ունի ընդգծված քաղաքական բաղադրիչ՝ կարևոր տեղ զբաղեցնել դեպի Եվրոպա գազի առաքման նախագծերում, փորձել դառնալ գազի արտահանման այլընտրանք և ստանալ Եվրամիության առաջնորդների աջակցությունը ներքաղաքական ու տարածաշրջանային իր ծրագրերում:

Նշենք, սակայն, որ TANAP-ը չարժանացավ անդրազգային խոշոր ընկերությունների հավանությանը, և միայն British Petroleum-ը համաձայնեց ներգրավվել այդ ծրագրում՝ 20% բաժնեմասի դիմաց և փոխարենը Ադրբեջանին ստիպելով իր դիրքերը ազգային գազի

շուկայում ամրապնդող մի շարք պայմանագրեր կնքել (BP-ի-հեղ.) դիրքերը այդ երկրի գազի շուկայում ամրապնդող մի շարք պայմանագրեր կնքել: Ինչևէ, TANAP ծրագրի նախնական արժեքը մոտ 13 մլրդ դոլար է, որի իրականացման մի հսկայական բաժինը պետք է կատարվի Ադրբեջանի նավթի հիմնադրամի միջոցներով:

Այսինքն, ներկա քաղաքականության շարունակության դեպքում, նավթի ցածր գների պայմաններում, Ադրբեջանը կկանգնի ֆինանսատնտեսական խորը ճգնաժամի եզրին, որից կարող է փորձել դուրս գալ նաև ռազմական արկածախնդրությունների կազմակերպման միջոցով բնակչությանը սոցիալ-տնտեսական սրվող իրավիճակից շեղելու համար:

Այսպիսով Ադրբեջանի քաղաքական և տնտեսական համակարգին տեսանելի ապագայում հատուկ կլինեն հետևյալ միտումները՝

1. էներգետիկ համակարգից ֆինանասա-տնտեսական կախվածության ուժեղացում;
2. կախվածության մեծացում վերազգային նավթային ընկերություններից, առաջին հերթին՝ BP-ից;
3. իր ներքին ու արտաքին քաղաքականության վրա այդ ընկերությունների ներազդեցության պահպանում ու ուժեղացում՝ պայմանավորված նոր ներդրումների անհրաժեշտությամբ;
4. նավթի ցածր գների պայմաններում տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորաու;
5. ազգային արժույթի՝ մանաթի շարունակական թուլացում;
6. տարածաշրջանում անկայունության աճի պահպանում;
7. Հարավային Կովկասում ռազմաքաղաքական ու անվտանգային հավասարակշռության դինամիկայի փոփոխություն:

Աղբյուրները

"Azerbaijan Crude Oil Production Annual Growth Rate." Index Mundi. http://www.indexmundi.com/energy/?country=az&product=oil&graph=production-growth-rate.

"Azerbaijan GDP" Trading Economics. http://www.tradingeconomics.com/azerbaijan/gdp

"Azerbaijan GDP Has Grown by 3.1%: Infographics." Trend.Az. http://www.trend.az/infographics_page.php?id=37

"Azerbaijani Manat Collapses after Government Abandons Dollar Peg." Financial Times. https://www.ft.com/content/b5f46eac-a7c4-11e5-9700-2b669a5aeb83

"Azeri-Chirag-Deepwater Guneshli" Bp.com. http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/ACG.html

"Baku to the Future." The Economist. http://www.economist.com/news/europe/21699164-post-soviet-autocracy-tries-transmute-black-gold-modernity-baku-future

"Baku-Tbilisi-Ceyhan Pipeline" Bp.com. http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/BTC.html.

BP stats. "BP Statistical Review of World Energy June 2016," n.d.

CIA World Factbook. "Azerbaijan. Economy Overview." https://www.cia.gov/library/publications/the-world-bank/geos/aj.html.

"Economic Development in Azerbaijan," n.d.

"Europe." 2015 Index of U.S. Military Strength. http://index.heritage.org/military/2015/chapter/threats/europe/.

Fouche, Gwladys, and Solsvik. "Statoil Exits Shah Deniz Gas Project with Stake Sale to Petronas." Reuters, October 13, 2014. http://www.reuters.com/article/us-statoil-petronas-shahdeniz-idUSKCN0I209020141013.

Hasanli, Azad. "Production in Azerbaijan constituted half of its GDP." Trend.Az, June 16, 2016. http://www.trend.az/business/economy/2546418.html.

International Monetary Fund. "World Economic Outlook Database." http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/weodata/index.aspx.

ISET Policy Institute. "Azerbaijan Economy and the Oil Prices: A Blessing in Disguise?" Meydan TV. http//www.meydan.tv/+7nenh.

Karasyuk, Yevgeni. "'There were no dollars, they bought rubles.' Currency devalvation within CIS." SLON. https://slon.ru/posts/61581.

Karimova. "Azerbaijani Parliament Adopts Revised Budget for 2016." AzerNews.az, February 23, 2016. http://www.azernews.az/nation/93260.html.

"OEC - Azerbaijan (AZE) Exports, Imports, and Trade Partners." OEC. http://atlas.media.mit.edu/en/profile/country/aze/.

"The Impact of Declining Oil Prices on the State Budget of The Republic of Azerbaijan Public Finance and Budgeting." Oval, January 27, 2016. http://oval.az/the-impact-of-

declining-oil-prices-on-the-state-budget-of-the-republic-of-azerbaijan-public-finance-and-budgeting/.

Patterson, Ron. "US Oil Production Finally Starting to Decline." Journal of Glaciology, September 1, 2015. http://openurl.ingenta.com/content/xref?genre=article&issn=0022-1430&volume=61&issue=228&spage=745.

Scholtens, Bert. "Falling Oil Prices Should Help Europe's Ailing Economies, but the Wider Implications of the Price Drop Remain to Be Seen." EUROPP, January 21, 2015. http://blogs.lse.ac.uk/europpblog/2015/01/21/falling-oil-prices-should-help-europes-ailing-economies-but-the-wider-implications-of-the-price-drop-remain-to-be-seen/.

"Shah Deniz" Bp.com. http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz.html.

"SOFAZ Reserves in 2015 Reduced by $ 3.6 Billion," March 2, 2016. http://www.contact.az/docs/2016/Economics&Finance/030100148510en.htm

"South Caucasus Pipeline" Bp.com. http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/SCP.html.

"The Global Intelligence Files - Wiki - Who Owns What in Azerbaijan." WikiLeaks, February 20, 2013. https://wikileaks.org/gifiles/docs/15/1514568_wiki-who-owns-what-in-azerbaijan-.html.

Tsurkov. "SOFAZ Has Selected an Auditor for next Three Years." Trend.Az, July 12, 2016. http://www.trend.az/business/economy/2556354.html.

Woodward. "AIOC Contract." Azerbaijan International. http://www.azer.com/aiweb/categories/magazine/62_folder/62_articles/62_socar_aioc.html

Wöstmann, Alexander. "Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company Founded — Alexander's Gas and Oil Connections." Gas and Oil Article. Alexander's Gas&Oil Connections. An Institute for Global Energy Research. http://www.gasandoil.com/news/central_asia/06e64ce97241a092b52d5a35d6be6a60.

Արմեն Մանվելյան՝ պ.գ.թ. Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության հարցերով մասնագետ: Արմեն Մանվելյանը հեղինակ է 50-ից ավելի գիտական հոդվածների և 2 մենագրության նվիրված տարածաշրջանում էներգետիկ անվտանգության և աշխարհաքաղաքականության թեմաներին:

Կովկասի ինստիտուտը գիտահետազոտական կենտրոն է Երևանում: Նրա հիմնական նպատակն է քաղաքական որոշումների որդեգրման հարցում հասարակության լայն ներգրավվածության խթանումը: Ինստիտուտի գործունեության շրջանակները ներառում են գիտահետազոտական աշխատանքների իրականացում, տարբեր ոլորտներում քաղաքականության մշակում, քաղաքական որոշումների լոբբինգ, հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, բազմակարծության ապահովում:

Մենք առաջնորդվում ենք այն համոզմունքով, որ հասարակությունը կարող է գալ ժողովրդավարության միայն ազատ քննարկումների և գիտակցված ընտրության շնորհիվ: Մեր նպատակները կարդարացվեն, երբ Հարավային Կովկասի հասարակությունների մոտ կձևավորվի բազմակարծիք դիսկուրս հանրային կյանքի առանցքային հարցերի շուրջ. լինի դա տեղական կամ ընդհանուր ընտրություններ, բարեփոխումներ կրթության ոլորտում, արդարություն կամ լեզուներ, առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանության հարցեր, խնդիրներ արդարադատության կամ իրավապահության ոլորտում: Նմանատիպ յուրաքանչյուր հարց պահանջում է լայն քննարկում և գիտակից որոշումների կայացում:

Կովկասի ինստիտուտն իր առջև դրված նպատակներին հասնում է կրթության, գիտահետազոտական աշխատանքների և ցանցերի (կապերի) ստեղծման շնորհիվ: Կրթական գործունեությունում առավել ուշադրություն ենք դարձնում երիտասարդ լրագրողներին, քաղաքացիական հասարակության անդամներին և հասարակական ծառայողներին: Գրեթե չծանրաբեռնված խորհրդային ժառանգությամբ՝ երիտասարդ սերունդը դեռ փնտրում է ուժեղ հենակետ իր մասնագիտական գործունեության մեջ: Հենց նրանք պետք է սկզբնավորեն աշխատանքային առողջ մթնոլորտ՝ առաջնորդվելով մասնագիտական չափանիշներով և աշխատանքային սկզբունքներով: Մենք ձգտում ենք տալ միջազգային փորձ և ուղղորդել նրանց ավելի լայն մասնագիտական և էթիկական աշխարհ: Մենք համատեղում ենք երկարաժամկետ կրթությունը կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներով՝ տարբեր խմբերի և ունկնդիրների համար:

Գիտահետազոտական գործունեությունը ներառում է բանավեճեր, հետազոտական աշխատանք, խորհրդատվություն և հրատարակություններ: Բանավեճերն անցկացվում են հասարակության համար կարևոր հարցերի շուրջ: Հետազոտությունները լրացնում են տարածաշրջանի ըմբռնման և զարգացման հեռանկարների տեղեկատվության բացը: Հրատարակությունները, տարածվող Կովկասում և նախկին Խորհրդային Միությունում, տարածաշրջանի խնդիրներին նոր հեռանկար են առաջարկում: Մեր ունկնդիրները, հետազոտողները և դասախոսներն ունեն տարատեսակ կրթություններ. նրանց շարքում կան լրագրողներ, հետազոտողներ և զարգացման, պետական կառավարման և քաղաքական հասարակության մասնագետներ: Մեր գործունեությունը հայտնի է կարծիքների բազմազանությամբ, որն անց է կացվում իներտ միջավայրում և թույլ է տալիս միտքը/հաղորդագրությունը հասցնել հասցեատիրոջը: Մեր թեմաներն են հանդիսանում արդի խնդիրները: Մենք քննարկում ենք առցանց հրատարակությունների ռազմավարությունը և ընտրությունների մոնիթորինգը, նավթային քաղաքականությունը և միգրացիոն միտումները, մշակութային համագործակցությունը և ներքին քաղաքականությունը: Ամեն գարուն մենք անցկացնում ենք Կովկասի Գիտաժողով, որտեղ զուգամիտվում են բազմազան թեմաներ և մարդիկ՝ ամփոփելով անցած տարվա արդյունքները և քննարկելով տարածաշրջանի խնդիրները, որին հաջորդում է ԿԻ-ի Տարեգրքի հրատարակությունը:

Կովկասի Ինստիտուտ
Չարենցի փ. 31/4
0025 Երևան, Հայաստան
contact@c-i.am
www.c-i.am